ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և «Հայկական բժշկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության միջև

ք.Երևան, «05» նոյեմբերի 2021թ.

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ) և «Հայկական բժշկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԲԱ) միջև (այսուհետ՝ Կողմեր):

Հաշվի առնելով երկրի առողջապահական համակարգի առջև ծառացած մարտահրավերները դիմագրավելու կարողությունների համակարգման խիստ անհրաժեշտությունը և *բարձր գնահատելով* ՀՀ Կառավարության 2021-2026թթ. ծրագրում հիմնական առաջանահերթություն սահմանված առողջապահության ոլորտի զարգացման թիրախները՝ ի դեմս հասանելի, արդիական, բարձր որակի ծառայությունների մատուցման ապահովմանը,

գիտակցելով, որ այս գործընթացում կարևոր է պետական և քաղաքացիական կազմակերպությունների ներուժի ամբողջական և լիարժեք ներգրավումը, այդ թվում՝ արդյունավետ և շարունակական համագործակցությունը,

կարևորելով առողջապահության ոլորտի շարունակական զարգացման մեջ մասնագիտական ասոցիացիաների ասոցիացիայի վերածված ՀԲԱ դերակատարությունը և *ընդունելով* պետական առողջապահական ծրագրերի հաջող իրականացմանը նպաստելու ՀԲԱ պատրաստակամությունը,

արտահայտելով առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումներին միտված արդյունավետ և համակարգված համագործակցության փոխադարձ ձգտումները,

Կողմերը որոշեցին կնքել սույն Հուշագիրը՝ հետևյալի մասին

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն Հուշագրի նպատակն է ապահովել անհրաժեշտ համագործակցություն ՀՀ ԱՆ և բժշկական հանրությունը ներկայացնող ՀԲԱ-ի միջև՝ առողջապահության ոլորտում անհրաժեշտ օրենսդրական և գործնական նախաձեռնությունների ներդաշնակեցման, փոխճանաչելիության ամրապնդման և ինտեգրման գործընթացները ապահովող մեխանիզմները բարելավելու համար՝ նպաստելով առողջապահության ոլորտի զարգացման արդյունավետության բարձրացմանը և

դրան ուղղված նախաձեռնությունների և միջոցառումների թափանցիկության, հաշվետվողականության և լայն համաձայնության ապահովմանը:

Այդ նպատակով կողմերը մտադիր են օգտագործել առողջապահական քաղաքականության մշակման և իրականացման գործում ՀԲԱ դերակատարումը և գործնականում վերածել այն բանավեճի, երկխոսության և փոխգործակցության յուրատեսակ հարթակի բժշկական համայնքի հետաքրքրությունները ներկայացնող փորձագիտական հանրության, քաղաքացիական ոլորտի ներկայացուցիչների և առողջապահության քաղաքականության մշակման և իրականացման պատասխանատուների միջև:

Նախատեսվում է համագործակցությունն իրականացնել հետևյալ ուղղություններով՝

- առողջության համապարփակ ապահովագրական համակարգի ներդրում
- բժշկական օգնության և սպասարկման որակի կառավարման մեխանիզմների կատարելագործում, այդ թվում՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման և ոլորտային ուղեցույցների բարելավում և գործարկում
- վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման ուղղությունների զարգացում, այդ թվում՝ գործող սքրինինգային ծրագրերի կատարելագործում և նոր ծրագրերի ներդրում
- առողջ ապրելակերպի և առողջապահական կրթման ծրագրերի կատարելագործում և նոր ծրագրեի մշակում ու իրականացում
- առողջապահության ոլորտում գիտական հետազոտությունների իրականացման զարգացում
- շարունակական մասնագիտական զարգման կատարելագործում և ընդլայնում, ինչպես նաև բուժաշխատողների որակավորումն ապահովող և հավաստող համակարգի ներդրում
- մոր և մանկան առողջության պահպանման, անվտանգ մայրության, վաղ մանկական շրջանի և դեռահասության, ինչպես նաև հոգեկան առողջության պահպանման ոլորտի շարունակական բարեփոխումներ

Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև՝

- պարբերական հանդիպումների, թեմատիկ լսումների, սեմինարների, աշխատանքային քննարկումների և երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող այլ գիտագործնական միջոցառումների կազմակերպման,
- գիտական համաժողովների, դասընթացների, խորհրդակցությունների կազմակերպման,
- գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման,

- համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման և լուծման,
- կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման,
- նորարարական ծրագրերի համատեղ իրականացման,
- համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, աշխատանքների ընթացքին խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու,
- երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում, ՀՀ ԱՆ-ն ապահովում է առողջապահության քաղաքականությանը վերաբերող հայեցակարգերի ու ծրագրային փաստաթղթերի, օրենքների, օրենքների նախագծերի և դրանց կից փաստաթղթերի տրամադրումը ՀԲԱ-ին, ինչպես նաև ՀՀ ԱՆ աշխատանքային խորհրդակցություններին, աշխատանքներին և այլ ձևաչափերով քննարկումներին ՀԲԱ փորձագետների լիարժեք մասնակցությունը, ինչպես նաև սույն հուշագրով նախատեսված համագործակցության ուղղություններում իրականացվող գործողություններում գործող օենսդրության շրջանակներում ՀԲԱ ներգրավվածությունը:

Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում փորձագիտական հետազոտություն կամ ոլորտային ուսումնասիրություններ իրականացնելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև ՀԲԱ-ն:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն Հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն Հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

ՀՈՒՇԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ:

Սույն Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	«Հայկական բժշկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Նախարար՝ Ա.Ավանեսյան	Նախագահ՝ Ա.Սողոյան
Ստորագրություն ……	Ստորագրություն ……
Կ.Տ.	Կ.Տ.